ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5

02 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Սոնա Ադամյանը, Անահիտ Աղամալյանը, Արթուր Գրիգորյանը, Արարատ Թումանյանը, Մարուսյա Հովհաննիսյանը, Արտուշ Մաթեվոսյանը, Մարյամ Միքաելյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը

Նիստը արձանագրում էր Լարիսա Գրիգորյանը

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 2-ի չորրորդ նստաշրջանի N5 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին

3)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու նպատակով 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելու թույլտվություն տալու մասին

4)«Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Մեղրի

համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 21-ի N 66 որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին
5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 04-ի N 33-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին
8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Արմեն Արտեմի Հայրապետյանին օտարելու մասին
9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Թովմաս Վարոսի Մարգարյանին օտարելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 39-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 40-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը, համաձայն հավելվածի:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 41-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ – 1. Թույլատրել ներկայացնելու ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու նպատակով Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման հետևյալ ծրագրային հայտերը՝
1)Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում Մեղրի և Ագարակ քաղաքներում:
2)Բազմահարկ շենքերի վերելակների փոխարինում Մեղրի համայնքում:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 42-Ա/

ԼՍԵՑ - «ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻՔ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 66 ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել «Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 21-ի «Մեղրի համայնքի ղեկավարի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ստեղծելու մասին» որոշման նախագիծը և «Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 66 որոշման 2-րդ կետը:

3.Կազմակերպության տնօրենին՝ տասնօրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ «Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /Որոշում N 43-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 4-Ի ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՀԱՏՎԱԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1. Տալ համաձայնություն Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարելու Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառ ույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 45-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 04-Ի N 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 04-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N33-Ա որոշման հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 45-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ « ՄԵՂՐԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով, տրամադրել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 2200000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային ընդհանուր արժեքով՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 46-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐՄԵՆ ԱՐՏԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաքի Խ. Աբովյան փողոց 27 հասցեում գտնվող 37,3 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը/

և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00373 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0009-0015, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20042023-09-0029 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Արմեն Արտեմի Հայրապետյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Շինության համար՝ 10 000 դրամ x 0,1209 x 37,3 քմ = 45096 /քառասունհինգ հազար իննսունվեց / ՀՀ դրամ,

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի՝ 1221 դրամ x 37,3 քմ =45544 / քառասունհինգ հազար հինգ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 47-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԹՈՎՄԱՍ ՎԱՐՈՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաքի Ե. Չարենցի փողոց 20/1 հասցեում գտնվող 34,3 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը / և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00343 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0060-0016, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17042023-09-0053 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Թովմաս Վարոսի Մարգարյանին՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Շինության համար՝ 10 000 դրամ x 0,1209 x 34,3 քմ = 41469 /քառասունմեկ հազար չորս հարյուր վաթսունինը / ՀՀ դրամ,

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի ՝ 1221 դրամ x 34,3 քմ =41881 / քառասունմեկ հազար ութ հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 48-Ա/

Ավագանու անդամներ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՇԱՀԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Լ. Գրիգորյան